Հուլիսի 7–15-ը Թել-Ավիվ քաղաքում անցկացված «Ֆիզիկա» առարկայի 50-րդ հոբելյանական միջազգային օլիմպիադայում Հայաստանի թիմը նվաճել է 5 բրոնզե մեդալ: Մեղավակիր աշակերտներն են Եվա Հունանյանը, Դավիթ Չոհրաբյանը, Քրիստինե Գրիգորյանը, Հայկ Մուրադյանը և Դավիթ Կիրակոսյանը: Նրանք բոլորը սովորում են Ա. Շահինյանի անվան ֆիզիկամաթեմատիկական դպրոցում:

«Հայ ձայն» լրատվականի հետ զրույցում աշակերտների հաջողությունների մասին պատմեց Ֆիզիկայի հանրապետական օլիմպիադայի հանձնաժողովի անդամ Բիլոր Կուրդիյանը: Ըստ նրա՝ այս տարի Ֆիզիկայի միջազգային օլիմպիադային մասնակցում էր 78 երկիր, այդ թվում՝ Հայաստանը, և մեր երկիրը ներկայացնող բոլոր աշակերտները վերադարձել են մեղավներով:

«Հայաստանի թիմը ձևավորվում է հանրապետական օլիմպիադաների արդյունքում. ընտրվում են 5 լավագույն աշակերտներ, ովքեր Հայաստանը ներկայացնում են միջազգային օլիմպիադայում: Այս տարվա մեր գլխավոր հաջողությունն այն էր, որ բոլոր մասնակիցները մեղավներով վերադարձան Ֆիզիկայի ամենահեղինակավոր օլիմպիադայից, որը հատկապես աչքի է ընկնում իր խնդիրների բարդությամբ և աշխարհագրությամբ», – ասաց մեր զրուցակիցը:

Նրա խոսքերով՝ միջազգային օլիմպիադայում մեղավներ նվաճած աշակերտների առաջ Հայաստանում բաց են բոլոր ուսումնական հաստատությունների դռները. «Մեղավակիր աշակերտները կարող են անվճար և առանց քննությունների ընդունվել հայաստանյան ցանկացած բուհ, իսկ տղաները տարկետում են ստանում Չինված ուժերից: Այսինքն, եթե դու միջազգային օլիմպիադայից մեղավ ունես, ուրեմն քո առջև բոլոր դռները բաց են»:

Ինչ վերաբերում է աշակերտների շրջանում ֆիզիկայի նկատմամբ հետաքրքրությանը, Կուրդիյանը նշեց, որ այն ուղիղ համեմատական է աշխատաշուկայի պահանջարկին: «Այս առար-

կան առավել պահանջված կղառնա, երբ ունենանք գործարաններ ու ընկերություններ, որտեղ անհրաժեշտ կլինեն ֆիզիկամաթեմատիկական ու ինժեներական մասնագիտությունները: Օրինակ՝ հիմա Հայաստանում գործում են «Սինոփսիս» և «Մենթալ գրաֆիկա» ընկերությունները, կամ, օրինակ, «Նեյ-շնյ ինսթրումենթսը», որոնք հիմնված են հենց այս մասնագիտությունների վրա: Ներկայումս Հայաստանում կառուցվում է ինժեներական քաղաք, որը մեծ թափ է հաղորդելու այս մասնագիտությունների տարածմանը», – ասաց նա:

Կուրդիյանը նկատեց, որ ֆիզիկամաթեմատիկական մասնագիտացում ունեցողների պահանջարկն օրեօր ավելանում է. «Հիմա աշխատաշուկայում պահանջարկն ավելի մեծ է, քան ուսանողների քանակը: Գործատուները մարդ են փնտրում, չունեն աշխատող: Սակայն պետք է նշեմ, որ ֆիզիկայի կամ հարակից առարկաների նկատմամբ հետաքրքրությունը ևս ավելանում է, որովհետև երեխաները զգում են, որ կարող են իրենց սոցիալական կարիքները բավարարել այդ աշխատանքով: Իսկ երբ այդ ընկերությունները չկային, երեխաներն էլ չէին ձգտում ձեռք բերել այս մասնագիտությունները»:

Գոհար Ավետիսյան
<https://haydzayn.com>



ՍՈՎՈՐԻՐ ՃԻՇՏ ԽՈՍԵԼ ՀԱՅԵՐԵՆ

ՀՈՐԴՈՐԱԿ 4

ՇՆՈՐՀԱԿԱԼ ԵՆՔ ՁԵՉ ԿԱՄ ՁԵՉՆԻՑ, ԲԱՅՅ ՇՆՈՐՀԱԿԱԿՈՒԹՅՈՒՆ ԵՆՔ ՀԱՅՏՆՈՒԾ ՁԵՉ

Շնորհակալ եմ և **շնորհակալ լինել** բայական միավորները պահանջում են ո՛ւմ, ինչի՞ն, ումի՞ց, ինչի՞ց հարցերին պատասխանող լրացումներ: Այսինքն՝ մենք կարող ենք շնորհակալ լինել ինչպես մեկին, այնպես էլ մեկից: Բերենք օրինակներ.

«Շնորհակալ ենք ծնողներին (ո՛ւմ) զգոնության համար»:

«Շնորհակալ եմ իմ բախտին (ինչի՞ն), որ այս ժամանակներում եմ լույս աշխարհ եկել»:

«Անչափ շնորհակալ եմ Աստուծուց (ումի՞ց), որ ինձ անցկացրեց այդ փորձությունների միջով, երազելու հնարավորություն տվեց»:

«Շարթաթերթից (ինչի՞ց) շնորհակալ եմ, որով հետև նրա հարցազրույցից հետո տունս վերանորոգեցին»:

«Հեռացա՝ շնորհակալ լինելով այն կնոջը (ո՛ւմ), որն ասաց. «Հիշի՛ր, մարմնական ցավն անցողիկ է, հոգեկանը՝ ընդմիշտ տանջող»:

«Շնորհակալ եղանք թատրոնի տոմսավաճառից (ումի՞ց)»:

«Դուք պետք է շնորհակալ լինեք ճակատագրին (ինչի՞ն), որ Ձեզ պարզեց է այդպիսի արտաքին»:

«Հարկավոր էր շնորհակալ լինել ճակատագրից (ինչի՞ց). այս բոլորը նա հասկանում էր»:

Վերջին տարիներին պաշտոնական խոսքում և զանգվածային տեղեկատվության միջոցներում շնորհակալ եմ և շնորհակալ լինել միավորների հետ կիրառվում են հիմնականում տրական հոլովով լրացումներ (շնորհակալ եմ քեզ, զինվորին, ոստիկանությանը և այլն): Ինչպես տեսանք, կարելի է նաև շնորհակալ լինել քեզնից, զինվորից, ոստիկանությունից, քանի որ սովորական է բացառական հոլովի գործածությունը հոգեկան վիճակ, դրություն և համանման իմաստներ արտահայտող բայերի հետ (վախենալ, ձանձրանալ, սարսափել, զգուշանալ և այլն): Ուրեմն, ինչպես որ խոսվում, սարսափում ենք մեկից, այնպես էլ՝ գոհանում ենք մեկից, շնորհակալ լինում մեկից:

Այժմ անդրադառնանք **շնորհակալություն հայտնել** և **շնորհակալություն** միավորներին: Սրանք պահանջում են ու՛մ, ինչի՞ն հարցերին պատասխանող լրացումներ:

«Խորին շնորհակալություն եմ հայտնում իմ թեկնածությունն առաջադրած կազմակերպություններին և ընկերներին» (ու՛մ):

«Հատուկ շնորհակալություն ենք հայտնում իմ բազրությանը» (ինչի՞ն):

«Շնորհակալություն ձեզ (ո՛ւմ), պարո՛ն Գևորգ, շնորհակալություն»:

Բացառական հոլովով լրացումների կիրառությունը սխալ է (շնորհակալություն հայտնել բարերարից):

Այսպիսով՝

շնորհակալ եմ և **շնորհակալ լինել** բայերի հետ հավասարապես գործածել տրական և բացառական հոլովով լրացումներ (Շնորհակալ ենք ձեզ / ձեզնից, որ հետևում էք մեր խորհուրդներին),

շնորհակալություն հայտնել և **շնորհակալություն** միավորների հետ գործածել միայն տրական հոլովով լրացումներ (Շնորհակալություն ենք հայտնում / շնորհակալություն ձեզ համագործակցության համար):

ԼԵՉՎԻ ԿՈՄԻՏԵ



голубь масиса # 3 2019

ՍԱՅՅԱՑ ԵՂԱՎԵՐ

В этом году исполнилось 150 лет со дня рождения великого армянского композитора, певца, музыковеда, фольклориста, хормейстера, педагога, основателя национальной армянской композиторской школы, архимандрита Комитаса (Согомон Согомонян).

ԿՈՄԻՏԱՍ – 150

Լրացավ հայ երգահան, երգիչ, երաժշտագետ, վարդապետ և ուսուցիչ, բանահավաք, խմբավար, մանկավարժ, հայկական ազգային կոմպոզիտորական դպրոցի հիմնադիր Կոմիտասի ծննդյան 150-ամյակը:

Կոմիտասը (Սողոմոն Գևորգի Սողոմոնյանը) ծնվել է 1869 թվականի սեպտեմբերի 26-ին (հոկտեմբերի 8-ին) Փոքր Ասիայի Քյոթահիա քաղաքում: Հոր՝ Գևորգ Սողոմոնյանի ընտանիքը գաղթել էր Նախիջևանի Գողթն գավառի Ցղնա գյուղից, իսկ մայրը՝ Թագուհի Հովհաննիսյանը, արմատներով Բուրսայից էր: Սողոմոնը նրանց միակ զավակն էր: Երբ Կոմիտասը ընդամենը 6 ամսական էր, մահացավ նրա մայրը, իսկ տասը տարեկանում տղան կորցրեց նաև հորը: Դրանից հետո նրան սկսում է դաստիարակել հորական տատը՝ Մարիամը:

1875 – 1880 թթ. Սողոմոնը սովորում է Քյոթահիայի միջնակարգ ուսումնարանում, որն ավարտելուց հետո մեկնում է Բուրսա՝ ուսումը շարունակելու:

Սողոմոնի կյանքում շրջադարձային էր 1881 թվականի սեպտեմբերը, երբ նա Քյոթահիայի հոգևոր առաջնորդ Գևորգ վարդապետ Դերձակյանի հետ մեկնեց Էջմիածին: Վերջինիս Գևորգ Դ կաթողիկոսը հրահանգել էր իր հետ Քյոթահիայից մի որբ աշակերտ բերել: Հոկտեմբերի 1-ին Սողոմոնը ներկայացավ կաթողիկոսին: Վերջինս սկսեց խոսել հայերեն, և տղան ոչինչ չհասկացավ: Երբ կաթողիկոսն ասաց, որ տղան այդտեղ անելիք չունի, քանի որ չգիտի հայերեն, Սողոմոնը պատասխանեց, թե եկել է սովորելու ու երգեց «Լույս զվարթ»-ը: Երգելիս տղան նկատեց, թե ինչպես կաթողիկոսի աչքերից արցունքներ հոսեցին: Սողոմոնը դարձավ Գևորգյան ճեմարանի ուսանող:

Ճեմարանում նա սովորեց հայկական ձայնա-նիշերը՝ խազերը: Այստեղ բացահայտվեց երա-ժշտության նկատմամբ նրա մեծ սերը: Նա սկսեց ձայնագրել Էջմիածնի շրջակայքի գյուղերում լսած



երգերը, գյուղացիները նրան տվել էին «Նոտայի վարդապետ» անունը:

1890 թվականին Սողոմոնին շնորհվեց կուսակրոն սարկավագության վեցերորդ աստիճան: Նույն տարում նա երաժշտություն գրելու իր առաջին փորձերն արեց: 1891 թվականի մարտի 5-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Արարատ» պաշտոնական թերթում հայկական ձայնանիշերով տպագրվեց նրա «Ազգային օրհներգ»-ը:

1893 թվականին Սողոմոնն ավարտեց Գևորգյան ճեմարանը, իսկ նույն տարվա հոկտեմբերին Խրիմյան Հայրիկի կոնդակով ճեմարանում նշանակվեց երա-ժշտության ուսուցիչ:

1894 թվականի սեպտեմբերի 11-ին Սբ. Գայանեի վանքում նա ձեռնադրվեց արեղա՝ Կոմիտաս անունով, իսկ մեկ տարի անց Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատյանի կողմից՝ վարդապետ:

1895 թվականին Կոմիտասն ավարտեց ժողովրդա-կան երգերի առաջին ժողովածուն՝ «Շար Ակնա ժո-ղովրդական երգերի», որը ներառում էր սիրային, հարսանեկան, օրորոցային և պարային 25 երգ:

1895 թվականի հոկտեմբերի սկզբին Կոմիտասը մեկնեց Թիֆլիս և վեց ամիս հարմոնիա ուսանեց Մակար Եկմայանի մոտ՝ խորացնելով հարմոնիայի եվրոպական սկզբունքների մասին գիտելիքները:

1896 թվականի հունիսին Կոմիտասը ժամանեց Բեռլին: Սկզբնական շրջանում մի քանի ամիս ուսա-նեց Ռիխարդ Շմիդտի մոտ: Այնուհետև ընդունվեց հանրահռչակ Բեռլինի կայսերական համալսարան:



Երբ Օսկար Ֆրայերը հիմնեց Բեռլինի Միջազգային երաժշտական ընկերությունը, նրա անդամ դարձավ նաև Կոմիտասը:

1899 թվականի մայիս-հունիս ամիսներին Կոմիտասը հանդես եկավ հայկական ժողովրդական և եկեղեցական երաժշտության մասին դասախոսություններով:

Բեռլինում ուսանելու տարիներին նա ուսումնասիրեց կոմպոզիցիայի տեսություն, հոգեբանություն, փիլիսոփայություն, խմբավարություն, մշակեց ձայնը, սովորեց դաշնամուր ու երգեհոն նվագել: Այդ տարիներին գրեց երգեր, ռոմանսներ, խմբերգեր, մշակեց ժողովրդական երգեր:

1899 թվականին տպագրվեց Կոմիտասի «Հայ եկեղեցական երաժշտություն» ուսումնասիրությունը: Նույն թվականին նա վերադարձավ Էջմիածին, վերծանեց առողջանության խազագրությունը սկզբնաղբյուրների հետազոտության հիման վրա՝ ընդհանրացնելով իր ժամանակի գործնական թվերգության տվյալները:

Վերադառնալով Գևորգյան ճեմարան՝ Կոմիտասը 1899 թվականի սեպտեմբերից սկսեց վարել Մայր Աթոռի դպրատանի պաշտոնը՝ ճեմարանում դասավանդելով երաժշտություն: Նա հավաքեց և սկսեց ղեկավարել մեծ բազմաձայն երգչախումբ, որով համերգներ տվեց Երևանում, Թիֆլիսում, Բաքվում:

Կոմիտասն ամառն անց էր կացնում Հայաստանի տարբեր գյուղերում՝ հավաքելով և մշակելով հայկական գեղջկական երգեր: 1903 թվականին լույս տեսավ ժողովրդական երգերի «Հազար ու մի խաղ» ժողովածուն: Հավաքագրման հարցում նրան օգնեց Մանուկ Աբեղյանը:

1906 թվականի դեկտեմբերին, երբ Կոմիտասն արդեն չէր դասավանդում ճեմարանում, սկսվեցին հայ ժողովրդական և հոգևոր երգերի մշակումներով համերգները Փարիզում: Այդ համերգներից մեկում տեղի ունեցած մի դիպվածի մասին Հրայր Աճառյանը գրել է. «Իմացեր եմ, որ 1906 թուին Փարիզի մեջ Կոմիտասի ցուցադրական մեկ համերգն վերջ, ֆրանսիացի յայտնի կոմպոզիտոր-դաշնակահար Կոդ Դեբիսին, ծունկի գալով կը համբուրէ Կոմիտասի ձեռքերը, ըսելով. «Հանճարեղ հայր Կոմիտաս, Ձեր երաժշտական հանճարին առջև կը խոնարհիմ...»:

1907 թվականի հունիսին Կոմիտասն Արշակ Չոպանյանի հետ մեկնեց Իտալիա և երեք շաբաթ աշխատեց Վենետիկի վանքում: Այնուհետև Հռոմում հանդիպեց Պիոս 10-րդ Պապին, որի օգնությամբ թանգարաններ մուտք գործելու հնարավորություն ստացավ, որտեղ կատարեց բազմաթիվ ուսումնասիրություններ:

1908 թվականի հունվար-ապրիլ ամիսներին Վահան Տեր-Առաքելյանի հետ համերգներ ունեցավ Իզդիրում, Վաղարշապատում, Երևանում և Բաքվում: Կոմիտասի համերգային շրջագայությունները նպատակ ունեին հասարակությանը ծանոթացնել հայ ժողովրդական երաժշտությանը և այդ ասպարեզում կատարած ուսումնասիրություններին:

1909 թվականի մարտին Թիֆլիսի Արքունական թատրոնում տեղի ունեցավ միջազգային եկեղեցական երաժշտության փառատոն, որում Կոմիտասի ղեկավարած երգչախումբը գրավեց առաջին տեղը:

Մեկ տարի անց Կոմիտասը ժամանեց Կոստանդնուպոլիս, որտեղ ստեղծեց «Գուսան» երգ-



չախումբը 300 անդամներով: Այնուհետև նա բազմաթիվ դասախոսություններ և համերգներ ունեցավ ամբողջ Եվրոպայում, Թուրքիայում և Եգիպտոսում՝ ներկայացնելով մինչև այդ շատ քիչ ճանաչված հայկական երաժշտությունը:

1915 թվականի ապրիլի 24-ին երիտթուրքական վարչակարգը շուրջ 600 հայ մտավորականների հետ ձերբակալեց նաև Կոմիտասին և աքսորեց Չանդը (Կոստանդնուպոլիսից 800 կմ հեռու): Երկու շաբաթ անց եվրոպական և ամերիկյան դեսպանների միջնորդությամբ նա ազատ արձակվեց և վերադարձավ Կոստանդնուպոլիս:

Աքսորից վերադառնալուց հետո Կոմիտասի առողջական վիճակը կտրուկ վատացավ: Եղեռնի քստմնելի դրվագները, իր աշխատանքների կորուստը ծանր ազդեցին նրա նուրբ և զգայուն ներաշխարհի վրա: Նա կորցրեց հոգեկան անդորրը՝ ծանր և խորը վերապրելով իրականության և իր ժողովրդի կործանման ողբերգությունը:

Վարդապետի մոտ ակնհայտորեն խորանում էին հետապնդման մանիայի ախտանշանները, և ըստ հուշագիրների՝ յուրաքանչյուր ցնցում և ձայն սարսափեցնում էր նրան: Կոմիտասին թվում էր, թե թուրքերն անընդհատ հետապնդում են իրեն, ուստի և նա ձգտում էր բացարձակ միայնության և լռության...:

Բժշկապետ Վահրամ Թորգոմյանը 1916 թվականի աշնանը, խորհրդակցելով Կոստանդնուպոլիսի հայտնի հոգեբույժ դոկտոր Գոնոսի հետ, Կոմիտասին տեղափոխեց Շիշլիի հիվանդանոցը, իսկ 1919 թվականի ապրիլին՝ Փարիզի Վիլ-Եվրայի հոգեբուժարան: 1922 թվականի օգոստոսին միջոցների սղության պատճառով նա տեղափոխվեց Վիլ-Շուիֆի հոգեբուժարան, ուր մնաց մինչև իր կյանքի վերջը:

Կոմիտասը վախճանվեց 1935 թվականի հոկտեմբերի 21-ին, առավոտյան ժամը 6-ին Վիլ-Շուիֆի հիվանդանոցում՝ գարշապարի թարախակալումից առաջացած բարդությունների հետևանքով: Մահից հետո ստեղծվեց նրա մահադիմակը: 1936 թվականին Կոմիտասի աճյունը փոխադրվեց Երևան և թաղվեց Կոմիտասի անվան պանթեոնում:

Անգնահատելի է Կոմիտասի հավաքչական ու գիտական աշխատանքը: Նա ժողովրդական երգերը գրառել է ազգագրագետի վարպետությամբ, գեղագետի պահանջկոտությամբ և գիտնականի վերլուծական դիտողականությամբ: Նրա հավաքած ավելի քան 4000 գեղջկական երգերը հայ ժողովրդական երգարվեստի անթոյրգիա են:

Կոմիտասը հիմնականում գրել է մեներգային և խմբերգային երգեր: Բացի այդ մեծ երեգահանը դիմել է նաև այլ ժանրերի. եգալի են նրա «Դաշնամուրային պարերը», «Անուշ», «Քաղաքավարության վնասները», «Վարդան» և «Սասունցի Դավիթ» օպերաները, որոնք չի վիճակվել ավարտել:

Մեծ հանճարի գրիչը չի սահմանափակվել միայն երաժշտությամբ. Կոմիտասը տասնյակ բանաստեղծությունների հեղինակ է: Սակայն դրանք վարդապետի կենդանության օրոք չեն տպագրվել: Կոմիտասն իրեն չէր համարում կոչումնավոր բանաստեղծ, նա գրում էր ինքն իր համար:

Քեզ չըսիրե՛ր, գեհեն կորել
Ու կըրակով հոգին փորել:
Քեզի սիրել՝ դըրախտ երթալ
Ու վարդերով քընանալ:

2008 թվականի հուլիսի 6-ին Զվերեկի 400-րդ տարեդարձի կապակցությամբ Զվերեկի Ազգային ժողովի հարևանությամբ տեղի ունեցավ Կոմիտասի բրոնզե կիսանդրու բացումը՝ ի ճանաչումն երաժշտության մեջ ընդհանուր առմամբ և հայկական երաժշտության մեջ մասնավորապես նրա ունեցած ներդրման: Մինչ այդ Կոմիտասի գրանիտե և բրոնզե հուշարձաններ էին կանգնեցվել Դետրոյդում:

2008 թվականի սեպտեմբերին թողարկվեց Կոմիտասի լավագույն երգերի նախադեպը չունեցող ձայնասկավառակը Իզաբել Բայրաքչարյանի կատարմամբ և Հայաստանի ֆիլիարմոնիկ կամերային նվագախմբի ու դաշնակահար Մերոժ Կրադջյանի նվագակցությամբ:

1987 թվականին Էկրան բարձրացավ «Իմ Կոմիտասը» ֆիլմը, որում նկարահանվել են Հովհաննես Չեքիջյանը և անվանի երգչուհի Հասմիկ Պապյանը, ռեժիսորն է Լևոն Մկրտչյանը: Ֆիլմն անդրադառնում է նաև 1915 թվականի Հայոց Մեծ Եղեռնին:

Կոմիտասին է նվիրված Պարույր Սևակի «Անլթելի զանգակատուն» պոեմը, որը պատկերագարող է գեղանկարիչ Գրիգոր Խանջյանը: Կոմիտասի կերպարին ու ստեղծագործությանն անդրադարձել են նաև մի շարք գիտնականներ, գեղանկարիչներ, քանդակագործներ, երաժիշտներ, գրողներ և ուրիշներ:

Կոմիտասի անունով են կոչվել Հայաստանի պետական լարային քառյակը, Երևանի կոնսերվատորիան, Կամերային երաժշտության տունը, պողոտա, զբոսայգի, Ստեփանակերտի երաժշտական դպրոցը, երգչախմբեր արտերկրում, արձաններ են կանգնեցվել Երևանում, Վաղարշապատում, Փարիզում և այլուր:

2015 թվականի հունվարի 29-ին Երևանում Կոմիտասի անվան զբոսայգում տեղի ունեցավ Կոմիտասի թանգարան-ինստիտուտի բացումը: Նույն տարվա հունիսի վերջին «Վերածնունդ» մշակութային և ինտելեկտուալ հիմնադրամի շնորհիվ իրականացավ Կոմիտասի ծրագիրը. լույս տեսավ նրա կողմից կազմված «Հազար ու մի խաղ» 100 ժողովրդական երգերի ընտրանին:


2015 թվականի ապրիլի 24-ին, Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին, Ստամբուլի հայաշատ Ծիշլի թաղամասի Ջումհուրիյե պողոտայում ցուցատախտակ տեղադրվեց այն տան պատին, որտեղ ապրել է Կոմիտասը և որտեղից ձերբակալվել է 1915 թվականի ապրիլի 24-ին:

2015 թվականի նոյեմբերի 6-ին Սանկտ Պետերբուրգի Վասիլետստրովսկի վարչական շրջանի կենտրոնական Կամսկի այգում տեղի ունեցավ հայ հանճարի հուշարձանի բացման արարողությունը: Հուշարձանի հեղինակը Ռուսաստանի նկարիչների միության անդամ, Սանկտ Պետերբուրգի գեղարվեստասարդյունաբերական ակադեմիայի դոցենտ Լևոն Բեյբուրջյանն է, ճարտարապետը՝ Մաքսիմ Աթայանցը:

ՀՈՒՇԵՐ ԿՈՄԻՏԱՍԻ ՄԱՍԻՆ

Անձնական նկարագիր. միջահասակ, նիհար, ջղուտ և զգայուն, դեմքը դեղնավուն, աչքերը արտահայտիչ և վառվռուն, գլուխը ճաղատ, մորուքը ո՛չ «վարդապետավայել», այլ ծնոտի տակ միայն թողած, այսպես կոչված վագնեթյան, ինքը արագաքայլ և անհամբեր, միշտ շտապող, միշտ աշխատասեր, կյանքից գոհ, լավատես... Ապրում էր, կարելի է ասել, սպարտական կյանքով, ուտելու մեջ պարզ և չափավոր, չէր խմում ու չէր ծխում. քնում էր գարուն թե ձմեռ բաց պատուհանով և, որ գլխավորն էր, պառկում էր ուղղակի հատակի վրա, առանց ներքնակի և բարձի: Նոտագրության մեջ մաքրասեր էր, գրում էր գեղեցիկ, իր իսկ տողած թղթերի վրա, այնպես որ նրա ձեռագրերից կարելի էր ուղղակի կլիշե պատրաստել:

Գարեգին Լևոնյան



голубь масиса # 3 2019

ՄԱՅՅԱՑ ԼՂՂԿԵՐ

Կոմիտասը մեր ժողովրդի հպարտությունն է, նրա գործը՝ մեր ազգային անսպառ հարստությունը... Նա հայտնագործել է մեր ազգային երգը, հայկական երաժշտությունը, ազգային մելոսը՝ ինքնուրույն և անաղարտ: Նա հիմն է դրել ազգային երաժշտական կուլտուրային... Կոմիտասը հայ երգով լույս աշխարհի հանեց դարերի խավարի մեջ կեղեքված ժողովրդի խուլ բողոքն ու ցասումը բռնության, ստրկության դեմ. նրա խեղդված վիշտը, իրավագուրկ կյանքը և պայծառ ապագայի հանդեպ տածած հավատը:

Ավետիք Իսահակյան

Կոմիտասի երաժշտությունը մի այնպիսի ոճական անաղարտություն է, մի այնպիսի վսեմաշուք լեզու, որ դժվար է շրջանցել այն, դժվար է այս կամ այն կերպ նրան չառնչվելը, նրա ազդեցությունը չկրելը: Ես միշտ գերված եմ եղել և գերված կմնամ Կոմիտասի երաժշտությամբ:

Արամ Խաչատրյան

Ես զարմանում եմ, որ 25 տարի սրանից առաջ փոքրիկ Հայաստանը տվել է մի Կոմիտաս, որի ստեղծագործություններն իրենց գեղարվեստական կառուցվածքի և արժեքի տեսակետից հազիվ կարելի կլինեք սպասել Ռուսաստանի խոշոր կենտրոններում ապրող նույն ժամանակի ամենահայտնի ռուս կոմպոզիտորներից:

Միխայիլ Գևորգի

Հայ ժողովրդական երգը հանձինս Կոմիտասի գտել է իր ամենացայտուն վարպետին: Նա ուսանելի է շատ տեսակետներից: Եվ հայ երաժշտության զարգացմանը նախանձախնդիր ամեն ոք նախ պետք է լիովին ուսումնասիրի և հասկանա Կոմիտասին և ապա միայն սկսի ստեղծագործել:

Թոմաս Հարություն

Հանձնարեղ հայր Կոմիտաս: Խոնարհվում եմ ձեր երաժշտական հանձնարի առջև: Եթե Կոմիտասը միայն «Անտունի» գրեր, դա բավարար կլինեք, որպեսզի մեծ գեղանկարիչ համարվեք: Իմ կարծիքով, Կոմիտասը հայտնություն է, ամենաուշագրավ երևույթը երաժշտական աշխարհում:

Կող Դեբյուսի

Կոմիտասը բնության հրաշքներից է: Մի՞թե հրաշք չէ՛ տասը տարեկան որբը գա Էջմիածին, կաթողիկոսի մոտ տանկերեն երգի, հետո էլ... Նա պատարագ է ստեղծել: Նրա պատարագը մեր ժողովրդական ոգու խտացումն է: Դա մեծ արվեստ է, մեր ժողովրդական իսկական օպերան: Կոմիտասը խորն էր զգում ժողովրդական ոգին, և նա կարող էր գրել այդպիսի մեծ գործ...:

Լսում եմ ու զարմանում նրա երգի պարզության վրա: Պարզությունը, բնականությունը, հանձնարի ամենաբնորոշ հատկությունն է: Արվեստի հետ գործ ունենալիս չպիտի մտածես՝ ինչպես է արված: Ամեն մի գիծ պետք է արժեք, բովանդակություն ունենա: Գաղտնիքն էլ հենց պարզության մեջ է: Բնությունն էլ է այդպես՝ պարզ ու անբացատրելի: Դու կարծում ես՝ մենք լրիվ հասկանո՞ւմ ենք Կոմիտասին: Նրա մեծությունն իր մեջ է, ոչ ոք չի սովորեցրել, բայց նա զգացել է, մտել բնության մեջ: Այս երաժշտությունն իր կանոններն ունի, որը թելադրված է մեր երկրի ու ժողովրդի ոգով...:

Մարտիրոս Մարյան

Մեր երաժշտական լեզվի համար Կոմիտասն արեց նույնը, ինչ դարեր առաջ Մաշտոցն արեց մեր խոսակցական լեզվի համար: Մեր լեզուն կար Մաշտոցից առաջ, ինչպես որ երաժշտությունն էլ՝ Կոմիտասից առաջ: Բայց ինչպես Մաշտոցը գտավ մեր լեզվի բաղադրիչները, նրա հնչյունակազմը և դա արձանագրեց այբուբենով,

ճիշտ այսպես էլ Կոմիտասը գտավ մեր երաժշտության հնչյունակազմը մեկ այլ յուրատեսակ այբուբենով: Երկուսի արածն էլ գործ չէր, որ կոչենք մեծ կամ փոքր: Երկուսի արածն էլ գյուտ էր, իսկ գյուտը փոքր չի լինում:

Պարույր Սևակ

Կոմիտաս մարդկային բացառիկ առաքինություններու ծով էր: Չափազանց աշխատասեր, աննկուն կամքի տեր, անկեղծ, բարեհոգի, ընկերասեր, քաղցր և համեստ՝ ամենուն նկատմամբ: Մաքրակրոն էր ան և մեծ հայրենասեր մը: Բացի իր երաժշտական հանձնարեն, քովնտի շնորհքներ ալ ուներ. բանաստեղծ էր և ճարտար կոմիկ դերասան մը, որ ֆարսի մեջ ալ մեզ հայտնի էր:

Վերին աստիճան սրամիտ, կենսուրախ և պատրաստարան էր Կոմիտաս և սիրված ճեմարանի մեծեն ու փոքրեն: Կոմիտաս բացառիկ դուրեկան ձայն մը ուներ և արժանացած էր Խրիմյան Հայրիկի մասնավոր համակրանքին, Խրիմյան Հայրիկի կարգադրությամբ, տոնական օրերը, Կոմիտասը կղեկավարեր դպրաց դասը և պատասխանատու էր խորանեն երգված սաղմոսերգություններու և ավետարաններու ընթերցման:

Կոմիտաս մեծ ընթերցասեր մըն էր, ուժեղ էր հայոց լեզվի մեջ և հայոց պատմությունը շատ լավ գիտեր: Մասնավորապես կկարդար Մովսես Խորենացին և Նարեկացին, իսկ Աբովյանին «Վերք Հայաստանին» կանվաներ իր մասունքը...:

Միշտ կըսեր, որ ժողովրդական բանահյուսությունը իր հոգվույն մեջ զուգընթաց էր ժողովրդական երաժշտության հետ: Եվ կավելցներ վստահ շեշտով մը. «Ես պիտի հասնիմ իմ բուն նպատակին և մեր հայ ժողովրդական երաժշտության գանձերը դուրս պիտի բերեմ հայրենի ավերակներեն...»:

Կոմիտաս քաջ պարող մըն ալ էր, միևնույն ատեն կատակերգակ դերասանի հակումներ ուներ. ձևեր և բարբառներ հարազատորեն ընդօրինակելու բացառիկ շնորհք ուներ: Ճեմարանի մեր մտերմական հավաքույթներուն, որքան հանելի էր մեզ, երբ ան, մեր խնդրանքին վրա, իր ծննդավայրեն սոված թրքական պարերը թե կերգեր, թե կպարեր, և մենք ծափերով կոզևորեինք իր մատներուն շիշկոցները՝ իր բազմաձև ճոճումներուն մեջ:

Ճեմարանի ուսուցիչներուն մեջ հայտնի ժողովրդական պարողն էր: Տղամարդկանց խիզախ, խրոխտ շորորեն, ծանր ճոճումներով և մարտական սուրով պարերեն մինչև շինական կանանց պարերը, իրենց ձայնի հարազատ ելևէջներով և մարմնի ու ձեռքերու նուրբ արտահայտություններով առհավետ անմոռանալի կմնան:

Կոմիտաս բժախնդիր էր մաքրության: Անոր թխտրակ դեմքը, սեփ սև մազերը մաքրության մեջ միշտ կփայլեին: Մեծ խնամք կտաներ իր հագուստներուն մաքրությանը:

Կոմիտասի ձայնը մեծ դիպագուն ուներ: Բեռլին գտնված միջոցին հայ ժողովրդական երգերը անձնապես ցուցադրած համերգեն վերջ, Բեռլինի օպերայի տնօրենը անձամբ կհրավիրե զինքը իբրև օպերայի գլխավոր երգիչ և կխոստանա բացառիկ վճարում: Կոմիտասը կպատասխանե անոր. «Իմ երգչի կարողությունները մեկ նպատակի միայն կծառայեն, մեծ ժողովուրդիս երգն ու երաժշտությունը ծանոթացնել երաժշտական աշխարհին և ապացուցել, որ հայ ստեղծագործ ժողովուրդը սկզբնական դարերեն ունեցեր է իր ինքնուրույն երգն ու երաժշտությունը:

Հրաչյա Անառյան

«Հայ ժողովուրդը կոմիտասյան երգին մեջ գտավ, ճանաչեց իր հոգին, իր հոգեկան ինքնությունը: Կոմիտաս վարդապետը սկիզբ է, որ վախճան չունի: Նա պիտի ապրի հայ ժողովրդով, հայ ժողովուրդը պիտի ապրի նրանով, ինչպես այսօր, այնպես էլ հավիտյան»:

Ամենայն Հայոց Կաթողիկոս Լուսինե Ա

Голубь масиса # 3 2019

ՄԱՅՅԱՅ ԵՂՈՎԵՆ

ЛЕОНИД СПЕНДИАРОВ: ПРЕРВАННЫЙ ПУТЬ ВЫДАЮЩЕГОСЯ УЧЁНОГО-ГЕОЛОГА

К 150-летию Л. А. Спендиарова

История нашей диаспоры – это, пожалуй, самая значимая часть нашей истории времен без государственности. Однако когда разворачиваешь ту или иную страницу летописи, возникает смутное ощущение листания семейного альбома. Мелькают родные, знакомые лица, вспоминаются имена, события. Переворачивая листы, мы даем себе слово обязательно потом вернуться к мелькнувшим воспоминаниям, все восстановить в памяти, обновить старые связи. Но время уходит, стирая прежнее, заполняя страницы настоящим...

Со школьной скамьи, с самого юного возраста нам рассказывали, что историческая судьба нас разнесла по всему свету. И мы сумели не только выжить, но и основать свои маленькие «родины» по всему свету, по всей России. В общих чертах представляем, что в каждой «малой родине» строились школы, церкви, выпускались газеты, налаживались быт и общественная жизнь. А также формировалась своя элита, поднимались, приобретали влияние целые семьи. Традиционно при упоминании московской общины мы вспоминаем Лазаревых, в Петербурге – Аргутинских-Долгоруких, Ростове-на-Дону – Паткановых, а в Крыму – Айвазовских и Спендиаровых. Да, знаменитых братьев Леонида и Александра. Имя Александра Афанасьевича Спендиарова (Александр Степаноси Спендиарян) не нуждается в представлении. Композитор, автор оперы «Алмаст» (написанная по сюжету поэмы Ов. Туманяна «Взятие крепости Тмук»), бессмертных «крымских» и «ереванских» эскизов. Его имя присвоено Ереванскому театру оперы и балета, действует его дом-музей. Однако сегодня мало кто из ереванских старожилов помнит, что недалеко от дома-музея композитора, на улице Абовяна, чуть ниже кинотеатра «Москва», нахо-



дился другой музей минералогии имени другого Спендиарова – Леонида, старшего брата великого композитора, выдающегося геолога.

Леонид Афанасьевич Спендиаров прожил очень короткую, но яркую и насыщенную жизнь. Родился в Каховке в 1869 году. Лет через восемь семья переезжает в Симферополь, где Леонид в 1889 году заканчивает гимназию и в том же году поступает на отделение естественных наук физико-математического факультета Московского университета и на вокальное отделение Московской консерватории. Будучи так же музыкально одаренным, как и младший брат, Леонид с большим успехом участвовал в студенческих музыкальных вечерах.

В 1890 году в консерваторию поступает Александр, и братья начинают выступать дуэтом. Александр становится аккомпаниатором Леонида. Здесь же, в Москве, состоялась их встреча с профессором права Нерсесом Осиповичем Нерсесовым. Они знакомятся с родным языком и историей.

Как рассказывают современники, братья не состояли ни в каких политических студенческих организациях, но обладали острым чувством справедливости и солидарности. За участие в студенческих беспорядках Леонид Спендиаров в 1892 году был исключен из университета. В



том же году он поступил в Дерптский университет (Тарту, Эстония), закончил его в 1894 году с золотой медалью и ученой степенью кандидата сельскохозяйственных наук. В этом старинном учебном заведении (основано в 1632 году) была хорошо поставлена научно-исследовательская работа, и преподавательский состав пользовался в научных кругах большим уважением. Здесь, в университете Дерпта, Леонид Спендиаров увлекается минералогией. Предметом изучения для него стали вулканические породы горы Арагац, земли окружения Котайка. По предложению Франца Иосифовича Левинсона-Лессинга его отправляют в Цюрих на международный геологический конгресс. В следующем году он получает вторую ученую степень – кандидата минералогических наук.

Кажется, судьба более чем благосклонна к талантливому молодому человеку. В 1896 году он женится на первой красавице Крыма – внучатой племяннице великого Айвазовского – Варваре Мазировой и как член международного геологического общества отправляется в командировку в Вену.

В 1897 году, оставив жену и новорожденного сына в Вене, Спендиаров едет на Кавказ, чтобы подготовить все для экскурсии членов Международного геологического конгресса, VII сессия которого должна была состояться в августе того же года в Петербурге. Здесь его постигает несчастье. Во время обхода он падает с лошади, получает тяжелую травму головы. Несмотря на страшную боль, Спендиаров не прекращает работу, более того, он приезжает в Петербург, 17 августа присутствует на открытии сессии, а вечером того же дня умирает. Было ему всего 28 лет.

Похоронили его на армянском кладбище Санкт-Петербурга. Спустя некоторое время, по просьбе родных, прах его был перенесен в Симферополь, в семейный склеп Спендиаровых.

Международная геологическая премия имени Л. А. Спендиарова учреждена в 1897 году на VII сессии Международного геологического конгресса в Санкт-Петербурге, «за лучшее сочинение в области геологии по вопросам, предложенным конгрессом на предшествующей сессии».

Родственники внесли в банк Санкт-Петербурга необходимые средства для этой цели. Премия первоначально составила 500 рублей.

Капитал в сумме 4 тысячи рублей, внесенный родными учёного на вечный вклад за № 33318, считается неприкосновенным. Премия выдаётся из процентов этого капитала за три года и присуждается Международным геологическим конгрессом на очередной сессии учёным без различия национальностей. В случае невыдачи, она остаётся на увеличение основного капитала.



Премия выплачивалась с 1900 года. В 1917–1926-х годах капитал премии был арестован большевиками, затем восстановлен при участии Геологического комитета России. Большую роль в этом сыграл Д. И. Мушкетов, который в 1926 году подтвердил правопреемственность СССР по вручению премии имени Л. А. Спендиарова.

Архив, геологические коллекции и библиотека Л. Спендиарова были переданы его отцом в Дерптский университет. Хранились в Центральном государственном историческом архиве Эстонской ССР, фонд № 402.

Именем братьев Спендиаровых был назван переулок в Симферополе.

По воспоминаниям дочери Александра Спендиарова – Марины (Александр Афанасьевич женился на вдове своего брата), в доме бабушки и дедушки в Судак бережно хранились «армянские» коллекции минералов «дяди Лёни». К сожалению, во время немецкой оккупации в Великую Отечественную войну дом был взорван, все коллекции погибли.

Не уберегли музей Л. Спендиарова и в Ереване. После развала СССР он был одним из первых объектов, отданных новыми властями на откуп предпринимателям.

Остался семейный склеп на Симферопольском староармянском кладбище в Крыму – одном из первых исторических пристанищ армян, живущих вне Родины.

Нуне Мхитарян

Վազգեն Ա՝ Վեհափառ, որը միավորեց հայուԼթյունը և հավատքը

18 августа – день памяти одного из самых почитаемых предводителей Армянской Апостольской церкви, Католикоса и Верховного Патриарха всех армян Вазгена Первого. Прошло 25 лет, как вознеслась в небеса его светлая душа, но до сих пор для армянина, который хоть раз встречался с ним, слушал его мудрые проповеди, имел честь получить его благословение, Вазген Первый останется образом святого, непорочного служителя Господа Бога, настоящего отца своего народа.

Օգոստոսի 18-ին լրացավ 25 տարին այն օրվանից, երբ այլևս մեզ հետ չէ Ամենայն Հայոց 130-րդ Կաթողիկոսը՝ Վազգեն Առաջինը: Վեհափառը հիրավի մի ուրույն էջ գրեց ոչ միայն Հայ Առաքելական Եկեղեցու, այլև համայն քրիստոնեության պատմության մեջ:

Առաջարկում եմ վերհիշել երջանկահիշատակ Վեհափառի աստվածահաճո և հայանպաստ գործունեության մի քանի կարևորագույն դրվագներ:

1955 թվականի սեպտեմբերի 30-ին ընտրվելով Ամենայն Հայոց հովվապետ՝ Վազգեն Ա-ն անմիջապես ծավալեց ազգը և հավատքը միավորելու գործունեություն: Արդեն մի քանի ամիս անց նա հովվապետական այց կատարեց հայկական սփյուռքի խոշոր համայնքներ, մասնավորապես մասնակցեց Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսական ընտրության և օժման հանդիսություններին՝ իր օրհնանքը տալով նորընտիր Կաթողիկոսին:

1957 թվականի սկզբին Վեհափառի շնորհիվ Մայր Աթոռին վերադարձվեց հայ մեծ բարերար Ալեքսանդր Մանթաշյանի միջոցներով կառուցված նոր վեհարանի շենքը, ինչն աննախադեպ երևույթ էր: Խորհրդային տարիներին նման որոշումները կայացվում էին ամենաբարձր քաղաքական մակարդակով՝ Մոսկվայում, և այն, ինչ արեց Վազգեն Ա-ն, ոչ այլ ինչ էր, քան սխրանք: Այդ նույն տարի Կաթողիկոսն այցելեց ԽՍՀՄ բոլոր մյուս հանրապետությունների հայկական թեմեր՝ իր աջակցությունը հայտնելով տեղի հոտին, որը Վեհափառին ընդունում էր մեծ ոգևորությամբ: Այսօր դժվար է պատկերացնել, որ այցի շրջանակներում նա իր հայրապետական խոսքն արտասանեց Ադրբեջանի Բաքու և Կիրովաբադ (այսօրվա Գյանջա) քաղաքների հայկական եկեղեցիներում, իսկ մի քանի օր անց մեկնեց Արցախ՝ այցելելով Ստեփանակերտի, Ծուշիի, Գանձասարի ու Ամարասի վանքերը և վերաբացելով նախկինում փակված որոշ վանքեր:

Ավելին, Վազգեն Վեհափառի օրոք ծավալվեցին հսկայական եկեղեցաշինական, ինչպես նաև վերանորոգման աշխատանքներ: Բերեմ մի փոքր մեջբերում երջանկահիշատակ կաթողիկոսի կենսագրականից. «Վերանորոգվել են Մայր տաճարը, Էջմիածնի Սբ. Հովհաննես, Սբ. Գայանե, Սբ. Ծողակաթ վանքերը, Գեղարդավանքը, Խոր Վիրապի վանքը, Օշականի Սբ. Մեսրոպ Մաշտոց, Երևանի Սբ. Սարգիս, Սբ. Զորավոր, Սբ. Հովհաննես, Մոսկվայի, Դոնի Ռոստովի և Արմավիրի եկեղեցիները: Մայրավանքի շրջակայքում կառուցվել են Նահատակաց հուշարձանը, Խրիմյան Հայրիկին նվիրված աղբյուր-կոթողը,



Գալուստ Կյուլպենկյան վանատունը, Ալեք և Մարի Մանուկյան գանձատունը»:

Միգուցե կրկնվում եմ, սակայն չեմ կարող ևս մեկ անգամ չընդգծել՝ այս աստվածահաճո գործն արվում էր աթեիստական ԽՍՀՄ-ում այն պարագայում, երբ այլ հանրապետություններում եկեղեցիներ էին քանդվում, իսկ ոչ մեծաքանակ հավատացյալները շատ դեպքերում աղոթելու տեղ չունեին:

Հաջորդ մի քանի տարիներին Վեհափառն այցելեց Հյուսիսային և Հարավային Ամերիկայի թեմեր՝ Արգենտինա, Բրազիլիա, Ուրուգվայ, ԱՄՆ, Կանադա՝ ամեն տեղ արժանանալով տեղի հայության ակնածանքին և սիրուն:

Վազգեն Ա-ի ջանքերով 1962-ին Հայ Առաքելական եկեղեցին ոչ միայն դարձավ Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի լիարժեք անդամ, այլև մեծ հեղինակություն վայելեց այդ կարևորագույն կառույցում:

Իր ողջ կյանքում Վազգեն Ա-ն միշտ եղել է իր ժողովրդի կողքին, կիսել նրա ուրախությունը և ոգևորել իր գործունեությամբ, իսկ ժողովուրդը ոչ միայն որպես հովվապետի, այլ հարագատի պես էր սիրում իր Կաթողիկոսին: Հիրավի, այսպիսի սեր է վայելել իր ժամանակին թերևս միայն Խրիմյան Հայրիկը: Գրեթե

տուն չկար Խորհրդային Հայաստանում, որտեղ, եթե ոչ ամենաերևելի տեղում, ապա ննջասենյակի պահարանի պահոցում դրված չլիներ Վազգեն Ա-ի նկարը՝ Եկեղեցու Տարեգրի հետ մեկտեղ: Դուք կգարմանաք, սակայն իմ հորական կողմի հավատացյալ տատիկը, որն ազգությամբ վրացուհի էր, Վրաստանում գտնվող իր տան «օթախի» ամենաերևելի տեղում կողք-կողքի տեղադրել էր հայ և վրացի Կաթողիկոսների լուսանկարները և աղոթում էր երկու լեզուներով: Ահա այսպիսի սեր ու հարգանք էր վայելում Վազգեն Ա-ն:

Երբեք չեմ մոռանա, ինչպես դարաբաղյան պայքարի ամենաձանր օրերին, երբ դեռ գոյություն ուներ Խորհրդային Միությունը, և գորբաչովյան ողջ պատժիչ մեքենան ուղղված էր մեր արդար պահանջը վիժեցնելուն, երբ գորբ էր լցված ոչ միայն Արցախում, այլև Հայաստանում, երբ արդեն հայի ձեռքով հայեր էի սպանվել Երևանում, զառամյալ Հայրապետը հանրային հեռուստատեսությամբ, արցունքն աչքերին դիմեց իր հոտին՝ առ Աստված աղերսելով իրար մեջ թշնամի չփնտրել և միաբանվել:

Օրինյալ լինես, սիրելի՛ Հայրապետ: Մեծ Մարդ, որը միավորեց ազգը, միավորեց քրիստոնեական հավատքը՝ իր հետևից թողնելով կուռ և ամուր Հայ Առաքելական Եկեղեցի: Դա 1994 թվականն էր...

*Գոռ Արսենյան
haydazayn.com*

Հիշողություններ Վեհափառ Հայրապետի մասին

Լուսահոգի Վեհափառ Հայրապետ Վազգեն Առաջին Կաթողիկոսը պատվիրում է հայ ոսկերիչներին ոսկերչական բարձր արվեստով ստեղծել հայոց այբուբենը, Սուրբ Խաչը և Խորհրդային Հայաստանի պետական զինանշանը՝ ոսկեհուռ և գոհարակուռ:

Մեզնից շատերն են տեսել հայոց այբուբենի ու Սուրբ Խաչի ոսկերչական բարձրարվեստ գլուխգործոցները: Չինանշանը, ասում են, Մատենադարանում է պահվում:

Մի օր, երբ Վեհափառին հարցնում են, թե ինչու է նա Էջմիածնի ոսկին վերածել ոսկերչական արվեստի, նա պատասխանում է. «Ոսկին կյոռ է, կգորի ինձնից հետո»:

Սուրբ ու հեռատես մարդ...

Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Առաջինի հովվապետական այցելությունը Հնդկաստան տեղի է ունեցել 1963 թվականի նոյեմբերին: Այդ այցելության հետ կապված կա առաջին հայացքից գրեթե անհավանական թվացող մի պատմություն: Սակայն, ըստ վկայությունների, ստորև ներկայացվող դեպքը ժամանակին պատմել է թարգմանիչ Ա. Կյուզեյանը, որն անձամբ ներկա է եղել Վեհափառի և Հնդկաստանի նախագահի հանդիպմանը:

Իսկ ամեն քան կատարվել է այսպես: Հանդիպման նախորդ օրը Կաթողիկոսին է այցելում նախագահական նստավայրի արարողապետը: Սա սկսում է մանրամասն բացատրել, որ հանդիպումը նախատեսված է ժամը 3-ին, մեր շքախումբը պիտի տեղում լինի 3-ից 10 պակաս: Հետո դռները կբացվեն, նախագահ Սարվեպալի Ռադհակրիշնանը դուրս կգա, որից հետ երկու ղեկավար անձինք համաչափ քայլով

պիտի ընդառաջ գնան, ողջագուրվեն և այն, և այն:

Հաջորդ օրը Հայոց հոգևոր առաջնորդը ճիշտ ժամանակին հասնում է նախագահական պալատ: Բացվում են դռները, երևում է Հնդկաստանի նախագահը, բոլորը սպասում են, որ նա, արարողակարգին հավատարիմ, հանդարտ քայլով պիտի շարժվի դեպի Վազգեն Առաջինը, բայց հանկարծ կատարվում է զարմանալի մի բան: Նախագահը մի կողմ է թողնում ամեն կարգի ձևական պատշաճություն, ձեռքերը լայն բացած հասնում է Կաթողիկոսին՝ բացականչելով. «Բարի եք եկել, Ջերդ Սրբություն», իսկ այնուհետև դառնալով դեպի թարգմանիչը՝ մի այնպիսի բառ է ասում, որից ոչ միայն սա է ապշում, այլև նրա կողքին կանգնած պատվո պահակախմբի պետը: Ռադհակրիշնանը ասում է. «Հարցրեք խնդրեմ, արդյո՞ք հայերի հոգևոր առաջնորդը իր հետ բերել է նաև Երևանի ռադիոյի անեկդոտներից»:

Երբ հարցը թարգմանում են, մյուսներից պակաս չի շփոթվում ու չի զարմանում նաև Վազգեն Վեհափառը: Նրան այլ բան չի մնում, քան դիմել թարգմանիչին ու ասել. «Հարցրեք Նորին Գերագանցությանը, թե նա Երևանի ռադիոյի ո՞ր անեկդոտներն է լսել...»:

Հայկական ռադիոյի անեկդոտների համբավը, որ հասել էր մինչև հեռավոր Հնդկաստան, դարձավ ջերմ բարեկամության հիմնաքար: Մեկ տարի անց՝ 1964-ին, երբ Հնդկաստանի նախագահը պաշտոնական այցով գտնվում էր Մոսկվայում, ցանկություն հայտնեց լինել նաև Երևանում և տեղեկացրեց, որ ինքը հրավեր է ստացել Ամենայն Հայոց Կաթողիկոսից: Այդ օրը Վեհափառ հայրապետը գտնվում էր Արագած լեռան լանջին գտնվող իր ամառանոցում, երբ նրան հայտնեցին, որ Սարվեպալի Ռադհակրիշնանի ինքնաթիռն արդեն օդում է: Վազգեն Առաջինն անմիջապես շտապեց օդանավակայան՝ թանկագին հյուրին դիմավորելու: Իսկ թե նա հնդիկ նախագահի համար նոր անեկդոտ ունե՞ր մտքում պահած, դա մենք երբեք չենք իմանա:



голубь масиса # 3 2019

ՄԱՅՅԱՑ ԱՂԱՎԵՐ

ԹԵ ԻՆՉՊԵՍ ԳՅՈՒՄՐԵՑԻ ՔԱՆԴԱԿԱԳՈՐԾԸ ՓՐԿԵՑ ԵԿԱՏԵՐԻՆԱ ԿԱՅՍՐՈՒՀՈՒ ԱՐՁԱՆԸ

«Մա Հայաստանն է» նախագծի հեղինակներ Հովհաննես Հակոբյանն ու Կարեն Բաղայանը պատմում են, թե ինչպես է Սերգեյ Մերկուրովը փրկել Եկատերինայի արձանը և ուղարկել Երևան:

2003 թվականին Ռուսաստանի Դաշնության հատուկ չվերթով Երևանից Մոսկվա տեղափոխվեց Եկատերինա Երկրորդի արձանը, որը տեղադրված էր այնտեղ, որտեղ այսօր տեղադրված է Մարտիրոս Մարյանի կիսանդրին: Արձանը Երևանում հայտնվեց 1951 թվականին փրկվելու արդյունքում: Մակայն ինչի՞ց կամ ումի՞ց էր պետք փրկել Եկատերինային պատերազմից վեց տարի անց: Անուններ հնչեցին, բայց չնշվեց այդ պատմության ամենակարևոր անունը՝ Սերգեյ Մերկուրով:

Ինչպե՞ս նա կարողացավ լուծել արձանը Երևան բերելու հարցը: 4 տոննա կշիռ ու 260 սմ բարձրություն ունեցող արձանը չես թաքցնի գրպանում կամ վերարկուի տակ:

Մի անգամ Մերկուրովը մեծ պատվեր է ստանում՝ կերտել Մարքսի 40 կիսանդրի: Նա դեմ չէր Մարքսին կերտելուն, մանավանդ որ կարող էր հարթել հարաբերություններն առաջնորդի հետ: Նրան ուղարկում են խոստացված մարմարը: Իջնում է բակ և կարկամում տեսածից: Տեսնում է Ալեքսանդր Օպեկուշինի հերթական գլուխգործոցը՝ Եկատերինայի արձանը, որը կերտվել էր կայսրուհու 100-ամյակի կապակցությամբ: Մերկուրովը ցավ է ապրում: Այս արձանը պետք է 40 կտորի բաժանվեր և կիսանդրիների վերածվեր: Մերկուրովն աննախադեպ որոշում է կայացնում, որի համար կարող էր գլխով պատասխան տալ:

Նա զանգահարում է Երևանի գլխավոր մարտարապետ Մարկ Գրիգորյանին: Երկու ընկերների գրույցից հետո Եկատերինա Երկրորդի արձանը տեղափոխվում է Հայաստանի մայրաքաղաք և տեղ գտնում ազգային պատկերասրահում: Արձանը



գաղտնի տեղափոխելու համար այն ձևակերպում են որպես մարմարի ջարդոն, որն իբր պիտի տարվեր Հայաստան՝ քանդակագործ ուսանողների պարասպմունքների համար:

Երկու ընկերները ճակատագրական որոշում են կայացնում երկու այլ ճակատագիր փրկելու համար՝ կայսրուհի Եկատերինա Երկրորդի և քանդակագործ Ալեքսանդր Օպեկուշինի:

Մակայն քանդակագործը պետք է ինչ-որ ձևով դուրս գար իրավիճակից, քանի որ պատվերն ուժի մեջ էր, և նա պետք է պատասխան տար Մտալինին:

Որքան էլ ցավալի է, նրան «ժողովուրդների հոր» գայրույթից փրկեց իր իսկ մահը 1952 թվականի հունիսի 8-ին: Հաջորդ տարի մահացավ նաև Մտալինը, իսկ կայսրուհու արձանը փրկվեց սերունդների համար:

armeniasputnik.am

Սերգեյ Դմիտրիի Մերկուրովը ծնվել է 1881 թ. հոկտեմբերի 26-ին (նոյեմբերի 7-ին) Ալեքսանդրապոլում (ներկայումս՝ Գյումրի) հունահայ քաղկեդոնացի գործարարի ընտանիքում:

1901 թ. սվարտել է Թիֆլիսի ռեալական դպրոցը և ընդունվել Կիևի պոլիտեխնիկական ինստիտուտ, որտեղից վտարվել է քաղաքական գործունեության համար: 1902 թ. Մերկուրովը ուսումը շարունակել է Եվեյցարիայում Ցյուրիխի համալսարանի փիլիսոփայության ֆակուլտետում, ուսանել է Արթի Մեյերի մոտ, Մյունխենի գեղարվեստի ակադեմիայում մինչև 1905 թ.: 1905 թ. աշնանից մինչև 1907 թ. սպրել և ուսանել է Փարիզում, աշակերտել է Օգյուստ Ռոդենին և բեյզիացի Կ. Մանյեին աշակերտող, որը անդրադարձել է նրա աշխատանքների վրա: 1907 թ. վերադարձել է Հայաստան՝ Խրիմյան Հայրիկի հետմահու դիմակը ստեղծելու նպատակով: Հետագայում





ապրել է Թիֆլիսում, Յալթայում, Մոսկվայում, ուր հրավիրվել է Լ. Ն. Տոլստոյի հետմահու դիմակը պատրաստելու համար: Երևանում կանգնեցված Ստեփան Շահումյանի արձանի (1931) հեղինակն է, Լենինի ու Ստալինի մի շարք քարձարվեստ հուշարձանների (այդ թվում՝ Երևանում) հեղինակ է: Մոսկվայում տեղադրված Տոլստոյի, Տիմիրյազևի, Բուրդենկոյի և այլ արձանների հեղինակն է: Եղել է ազատաստի անձնավորություն, ծանոթ է եղել Լենինի և ժամանակի շատ այլ նշանավոր գործիչների հետ:


Մահացել է 1952 թ. հունիսի 8-ին Մոսկվայում և թաղված է Նովոդևիչյան գերեզմանատանը:

Մերկուրովը ակադեմիական ժամանակակից ոճի ականավոր ներկայացուցիչ է՝ իր մահվան դիմակների



և քարե բրոկների պատրաստման թեմաներով: Որպես արվեստագետ փիլիսոփա՝ նա օգտագործել է նաև «մտածելու» մոտիվներ (օրինակ Դոստոևսկու մտածող արձանը): Իոսիֆ Ստալինի 70-ամյակի կապակցությամբ, Մերկուրովը հատուկ նվեր է պատրաստել թանկարժեք գրանիտե հուշարձան, որը կոչել է «Առաջնորդի մահը»: Ստալինը չի ընդունել այն, և դրանից հետո սկսվել է քանդակագործի կյանքի դժվար շրջանը:

1984թ-ին Մերկուրովի անվան թանգարան է բացվել Գյումրիում, որը եղել է Մերկուրովի հայրական



տունը: 59 խորհրդային առաջնորդների հետմահու պատրաստված դիմակներ են ներկայացված թանգարանում, որի մեջ է Լենինի իրական մահվան դիմակը: ԻՍՄ-ում և Հայաստանում թողարկվել են Մերկուրովին նվիրված փոստային նամականիշեր:

Արվեստագետի՝ «Միտք»(1913թ.) խորհրդանշական քանդակը 1956 թվականին տեղադրվել է Մերկուրովի գերեզմանին:

ԼԵՌ ԿԱՄՍԱՐ

1888–1965

Հայ գրող, երգիծաբան, ԽՍՀՄ գրողների միության անդամ Լեռ Կամսարը (Արամ Թովմասի Թովմադյան) ծնվել է 1888 թվականի հոկտեմբերի 24-ին, Արևմտյան Հայաստանի Վան քաղաքում, հոգևորականի ընտանիքում: Սկզբնական կրթությունը ստացել է տեղի Ամերիկյան վարժարանում: 1909 թվականին ավարտելով Էջմիածնի Գևորգյան ճեմարանը՝ վերադարձել է Վան, որտեղ աշխատել է որպես դերասան, ապա՝ հայոց լեզվի ուսուցիչ Աղթամարի Սուրբ Խաչի դպրանոցում, այնուհետև՝ Վանի մասնավոր Երամյան վարժարանում:

Առաջին երգիծական պամֆլետը՝ «Կամսարյան աշխարհագրությունը», տպագրել է 1910 թվականին Վանի «Աշխատանք» թերթում, որն անմիջապես հանրահայտ է դարձրել նրան: 1915 թվականին մասնակցել է Վան-Այգեստանի ինքնապաշտպանության կռիվներին:

Գաղթելով Երևան՝ սկսել է թղթակցել կովկասյան բոլոր թերթերին: 1921-1935 թվականներին եղել է «Խորհրդային Հայաստան» թերթի երգիծական բաժնի աշխատակիցը: 1935-1955 թթ. բռնադատվել է՝ բանտարկվելով սկզբում երևանյան բանտում, այնուհետև արտրվել է Վորկուտա և Բասարգեչար (այժմ՝ Վարդենիս): 1955 թվականի համաներման ժամանակ վերադարձել է Երևան:

Մահացել է 1965-ի նոյեմբերի 22-ին, Երևանում:

Հետաքրքիր ծագում ունի գրողի կեղծանունը: Իր առաջին գործերը խմբագրատուն հանձնելիս, հարցրել են, թե ում անվան տակ պետք է տպագրվեն գրվածքները: Արդեն սենյակից դուրս գալիս, այդ հարցին մեծ նշանակություն չտալով, շրջվել և պատասխանել է. **«Գրեք լեռ... կամ սար»:**

«Այժմ ի՞նչ եմ խնդրում ես արդարադատությունից... Դատարանը եթե միայն ազատել կամ պատժել կարող է, ապա այդ երկուսն էլ հավասարապես ինձ պետք չեն: Միայն ազատությունից ավելի ինձ պետք է, որ խորհրդային մտայնությունը դադարի ինձ սևամորթ գրող համարելուց: Ցանկանում եմ խորհրդային մյուս գրողներին հավասար ապրելու իրավունք...»

... Խոսքս վերջացնելուց առաջ, ընկե՛ր դատախազ, խնդրում եմ արդարադատությունից, որ իր վճիռն իմ մասին անպատճառ լինի գերագույն: Գերագույն ազատություն կամ գերագույն պատիժ, որով միայն կվերջանա այն մղձավանջը, որի մեջ խեղդվում եմ ես այժմ...»


(Լեռ Կամսարի՝ Չեկայում դատախազին ուղղված դիմումից)

1936 թ.

Եթե սովետահայ գրողներից ոմանց ստալինյան կառավարությունը ուղղակի գնդակահարեց, ապա Լեռ Կամսարի համար նախատեսել էր աննախադեպ պատիժ: Նրան կենդանի-կենդանի «գմռսել էին» և բերանը խցել՝ դատապարտելով դանդաղ գործող մահվան ու մոռացության: Տեսնելով նրա վշտալույս, տանջահար դեմքը և հոգևորից ու անարդարությունից բռնաբարված հեզ մարմինը՝ ականա մի մեղստո միտք էր սողոսկում մարդու մեջ՝ մտածելով լավ չէ՛ր լինի միանգամից գնդակահարված լինելը, որով կվերջանային անլուր գրկանքներն ու անասելի լլկանքները:

Բոլշևիկյան կառավարությունը, ոչ անմասն պրոլետ գրողների աջակցությունից, ծիծաղի վարպետի դատավճիռը կայացրեց 1931թ. հոկտեմբերի 15-ին, Չեկան վավերացրեց 1935թ. նոյեմբերի 26-ին, իսկ վերջնական պատիժը ի կատար ածվեց 1965 թ. նոյեմբերի 22-ին:

Ուշ աշնանային մի առավոտ էր: Երգիծաբանը դեռ պառկած էր անկողնում, քանզի խղճուկ կացարանը շատ էր ցուրտ և տամուկ՝ վերմակի տակից դուրս գալու համար: Անհանգստությամբ սպասում էր «Հայաստան»



հրատարակչության խմբագիր Խաչիկ Պողոսյանին, ով պետք է բերեր երկար ու ձիգ տարիներ սպասված «Մարդը տանու շորերով» գրքի ազդանշանային օրինակը:

Խմբագիրը երկար սպասեց-նել չտվեց՝ այլայլված ներս խուժելով գուժեց.

– Վարպե՛տ, Կենտկոմը գրքի վրա կալանք է դրել: Պատճառը «Թատրոնի դիրեկտորը» ֆիլիետոնն է...

– Բայց ինչն՞ է ամբողջ գիրքը ոչնչացնում, Խաչի՛կ, եթե ֆելիետոնը չի բավարարում, թող այդ էջերը հանեն ժողովածուից, չէ որ արդեն իսկ ծվատել են գիրքը այդ անարգ ու կեղծ հավատաքննիչները՝ զտելով նրա միջից քաղաքական սատիրան:

– Այդ առաջարկը ես արդեն արել եմ, վարպե՛տ, ասում են

տեխնիկայես հնարավոր չէ:

